

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՎԱՏՐԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Ավստրիայի Դաշնային կառավարությունը, որոնք այսուհետև սույն Համաձայնագրում կանվանվեն Պայմանավորվող կողմեր,

լինելով «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիայի կողմեր, որը Չիկագոյում ստորագրման համար բաց է 1944թ. դեկտեմբերի 7-ից,

ցանկանալով, ի լրումն նշված կոնվենցիայի, ստորագրել համաձայնագիր՝ իրենց համապատասխան տարածքների միջև և այդ տարածքներից դուրս կանոնավոր օդային հաղորդակցություններ հաստատելու նպատակով,

համաձայնեցին հետևյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1 ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Սույն Համաձայնագրի նպատակների համար, եթե ենթատեքստը այլ բան չի պահանջում.

ա/ «Պայմանավորվող կողմ» տերմինը նշանակում է՝ մի կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը, մյուս կողմից՝ Ավստրիայի Դաշնային կառավարությունը,

բ/ «Կոնվենցիա» տերմինը նշանակում է՝ «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիան, որը Չիկագոյում 1944թ. դեկտեմբերի 7-ից բաց է ստորագրման համար, ներառյալ վերջինիս ցանկացած Հավելված, որն ընդունվել է կոնվենցիայի 90-րդ հոդվածի համաձայն, ինչպես նաև Հավելվածի կամ կոնվենցիայի ցանկացած փոփոխություն, որը կատարվել է կոնվենցիայի 90-րդ և 94-րդ հոդվածների համաձայն՝ այնքանով, որքանով դրանք ուժի մեջ են երկու Պայմանավորվող կողմերի համար,

գ/ «ավիացիոն իշխանություններ» տերմինը նշանակում է՝ Հայաստանի Հանրապետության կառավարության դեպքում՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն, Ավստրիայի Դաշնային կառավարության դեպքում՝ տրանսպորտի, նորարարության և տեխնոլոգիայի դաշնային նախարար, երկու դեպքում էլ՝ ցանկացած այլ իշխանություն, որն օրինական կերպով լիազորված է կատարելու վերը նշված իշխանությունների կողմից ներկայումս իրականացվող գործառնությունները,

դ/ «տարածք» տերմինը պետության առնչությամբ նշանակում է՝ ցամաքային տարածքներ և դրանց հարակից տարածքային ջրեր, որոնք գտնվում են տվյալ պետության ինքնիշխանության ներքո,

ե/ «օդային հաղորդակցություն» տերմինը նշանակում է՝ ցանկացած կանոնավոր օդային հաղորդակցություն, որը կատարվում է ուղևորների, փոստի կամ բեռների՝ օդանավով փոխադրումների համար,

զ/ «միջազգային օդային հաղորդակցություն» տերմինը նշանակում է՝ օդային հաղորդակցություն, որը կատարվում է մեկից ավելի պետությունների օդային տարածքներով,

է/ «ավիաընկերություն» տերմինը նշանակում է՝ ցանկացած օդային փոխադրման ձեռնարկություն, որն առաջարկում կամ իրականացնում է միջազգային օդային հաղորդակցություն,

ը/ «նշանակված ավիաընկերություն» տերմինը նշանակում է՝ ավիաընկերություն, որը նշանակվել և լիազորվել է սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածի համաձայն,

թ/ «կանգառ ոչ առևտրային նպատակով» տերմինը նշանակում է՝ վայրէջք ցանկացած այլ նպատակով, քան ուղևորներ, բեռ կամ փոստ օդանավ վերցնելը կամ օդանավից իջեցնելը,

ժ/ «տարողություն» տերմինը նշանակում է՝

I. օդանավի առնչությամբ՝ ամբողջ երթուղու կամ այդ երթուղու հատվածում տվյալ օդանավի տարողունակությունը,

II. սահմանված օդային հաղորդակցության առնչությամբ՝ այդ հաղորդակցության ընթացքում շահագործվող օդանավի տարողությունը՝ բազմապատկած տվյալ օդանավի կողմից ամբողջ երթուղով կամ այդ երթուղու որևէ հատվածով սահմանված ժամանակահատվածից ավել իրականացվող թռիչքների հաճախականությամբ:

ՀՈԴՎԱԾ 2

ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ մյուս Պայմանավորվող կողմին վերապահում է կանոնավոր միջազգային օդային հաղորդակցությունների հետ կապված հետևյալ իրավունքները.

ա/ իր տարածքի վրայով թռիչք կատարել առանց վայրէջքի,

բ/ իր տարածքում կանգառել ոչ առևտրային նպատակներով:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ մյուս Պայմանավորվող կողմին վերապահում է սույն Համաձայնագրով սահմանված իրավունքները՝ Հավելվածում սահմանված երթուղիներով կանոնավոր միջազգային օդային հաղորդակցություններ հաստատելու համար: Այդ հաղորդակցությունները և երթուղիները այսուհետև համապատասխանաբար կանվանվեն «համաձայնեցված հաղորդակցություններ» և «սահմանված երթուղիներ»: Սահմանված երթուղով համաձայնեցված հաղորդակցության իրականացման ընթացքում յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի նշանակված ավիաըն-

կերությունը /ավիաընկերությունները/, ի լրումն սույն հոդվածի 1-ին կետում նշված իրավունքների, օգտվում է /օգտվում են/ մյուս Պայմանավորվող կողմի տարածքում այդ երթուղու համար չվացուցակում նշված կետերում կանգառներ կատարելու իրավունքից՝ ուղևորներ և բեռներ /ներառյալ՝ փոստ/ օդանավ վերցնելու և օդանավից իջեցնելու նպատակով:

3. Սույն հոդվածի 2-րդ կետի որևէ դրույթ չպետք է մեկնաբանվի այնպես, թե մի Պայմանավորվող կողմի ավիաընկերությանը /ավիաընկերություններին/ արտոնություն է վերապահվում մյուս Պայմանավորվող կողմի տարածքի մի կետից մյուսը վճարովի կամ վարձակալմամբ տեղափոխել ուղևորներ և բեռներ /ներառյալ՝ փոստ/:

ՀՈԴՎԱԾ 3

ԱՆՀՐԱԺԵՇՏ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իրավունք կունենա մյուս Պայմանավորվող կողմին գրավոր տեղեկացնել այն ավիաընկերության կամ ավիաընկերությունների նշանակման մասին, որի /որոնց/ նպատակը պետք է լինի սահմանված երթուղիներով համաձայնեցված հաղորդակցություն իրականացնելը:

2. Տեղեկանալով այդ նշանակման մասին՝ մյուս Պայմանավորվող կողմի ավիացիոն իշխանությունները պետք է, սույն հոդվածի 4-րդ և 5-րդ կետերի դրույթների համաձայն, նշանակված ավիաընկերությանը անհապաղ տրամադրեն շահագործման համապատասխան լիազորություններ:

3. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է իրավունք ունենա, մյուս Պայմանավորվող կողմին գրավոր ծանուցելով, չեղյալ համարել ցանկացած նման ավիաընկերության նշանակումը և նշանակել այլ ավիաընկերություն:

4. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերությունից կարող են մյուս Պայմանավորվող կողմի համար ապացույցներ պահանջվել առ այն, որ նա ի վիճակի է ապահովելու այն օրենքներով և կանոններով նախատեսված պայմանների կատարումը, որոնք բնականոն և պատշաճ կերպով կիրառվում են այդ Պայմանավորվող կողմի կողմից միջազգային օդային հաղորդակցությունների իրականացման նպատակով՝ համաձայն կոնվենցիայի դրույթների:

5. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իրավունք կունենա ամեն դեպքում մերժելու սույն հոդվածի 2-րդ կետում նշված շահագործման լիազորությունների տրամադրումը կամ առաջադրելու այնպիսի պայմաններ, որոնք անհրաժեշտ են նշանակված ավիաընկերության կողմից սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածում սահմանված իրավունքների իրականացման համար, երբ նշված Պայմանավորվող կողմը համոզված չէ, որ այդ ավիաընկերության սեփականության հիմնական մասը և վերահսկման գերակայող իրավասությունը պատկանում են այն Պայմանավորվող կողմին, որը նշանակել է այդ ավիաընկերությունը, կամ նրա քաղաքացիներին:

6. Այս կարգով նշանակված և լիազորված ավիաընկերությունը կարող է ցանկացած ժամանակ սկսել համաձայնեցված հաղորդակցությունների իրականացում, եթե ուժի մեջ են սույն Համաձայնագրի 11-րդ հոդվածի դրույթների համաձայն հաստատված սակագները, և այդ հաղորդակցությունների վերաբերյալ ձեռք է բերվել համաձայնություն՝ սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածի դրույթներին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 4

ԴԱԴԱՐԵՑՈՒՄ ԵՎ ՉԵՂՅԱԼ ՀԱՍԱՐՈՒՄ

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իրավունք կունենա դադարեցնելու սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածում սահմանված իրավունքների իրականացումը մյուս Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերության /ավիաընկերությունների/ կողմից կամ չեղյալ համարելու շահագործման լիազորությունը կամ առաջադրելու այնպիսի պայմաններ, որոնք անհրաժեշտ են այդ իրավունքները իրականացնելու համար՝

ա/ ամեն դեպքում, երբ նա համոզված չէ, որ նշված ավիաընկերության /ավիաընկերությունների/ սեփականության հիմնական մասը և վերահսկման գերակայող իրավասությունը պատկանում են այն Պայմանավորվող կողմին, որը նշանակել է այդ ավիաընկերությանը /ավիաընկերություններին/, կամ նրա քաղաքացիներին, կամ

բ/ այդ իրավունքները տրամադրող Պայմանավորվող կողմի օրենքները կամ կանոնները նշված ավիաընկերության /ավիաընկերությունների/ կողմից չպահպանվելու դեպքում, կամ

գ/ այն դեպքում, երբ ավիաընկերությունը /ավիաընկերությունները/ որևէ այլ ձևով թերանում է /թերանում են/ գործել սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան:

2. Վերոհիշյալ իրավունքը կիրականացվի միայն մյուս Պայմանավորվող կողմի հետ խորհրդակցություններից հետո, եթե անհրաժեշտություն չկա օրենքների կամ կանոնների հետագա խախտումները կանխելու նպատակով անմիջապես դադարեցնել, չեղյալ համարել կամ հարկադրել սույն հոդվածի 1-ին կետում նշված պայմանները: Նման դեպքում այդ խորհրդակցությունները կսկսվեն Պայմանավորվող կողմերից մեկի կողմից համապատասխան խնդրանքը ներկայացվելու օրվանից հետո վաթսու /60/ օրվա ընթացքում:

ՀՈԴՎԱԾ 5

ՏԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Համաձայնեցված կանոնավոր օդային հաղորդակցություններում շահագործվող տարողությունը պետք է բավարարի հետևյալ պայմանները.

1/ երկու Պայմանավորվող կողմերի նշանակված ավիաընկերության /ավիաընկերությունների/ համար պետք է լինեն սահմանված երթուղիներով

համաձայնեցված հաղորդակցությունների շահագործման արդար և հավասար հնարավորություններ,

2/ համաձայնեցված հաղորդակցություններ իրականացնելիս յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի ավիաընկերություն /ավիաընկերություններ/ պետք է հաշվի առնի /առնեն/ մյուս Պայմանավորվող կողմի ավիաընկերության /ավիաընկերությունների/ շահերը այնպես, որ բացասական ազդեցություն չգործեն այն ծառայությունների վրա, որոնք վերջինս /վերջիններս/ մատուցում է /մատուցում են/ նույն երթուղիներով կամ դրանց որևէ հատվածով իրականացվող հաղորդակցությունների ընթացքում,

3/ Պայմանավորվող կողմերի նշանակած ավիաընկերության /ավիաընկերությունների/ կողմից իրականացվող համաձայնեցված հաղորդակցությունները պետք է սերտորեն կապված լինեն սահմանված երթուղիներով իրականացվող փոխադրումներին ներկայացվող հասարակության պահանջարկին, և այդ համաձայնեցված հաղորդակցությունների առաջնահերթ խնդիրը պետք է լինի ավիաընկերությանը /ավիաընկերություններին/ նշանակած Պայմանավորվող կողմի և փոխադրման վերջնակետ հանդիսացող երկրների տարածքների միջև ուղևորների, բեռների և փոստի փոխադրման առկա և խելամուտորեն կանխատեսելի պահանջարկը բավարարելու համար համապատասխան տարողության ապահովումը,

4/ դրույթները, որոնք վերաբերում են օդանավ վերցված ուղևորների, բեռների և փոստի փոխադրմանը և բեռնաթափմանը այլ պետությունների, քան տվյալ ավիաընկերությունը /ավիաընկերությունները/ նշանակած պետությունների տարածքում սահմանված երթուղիների կետերում, պետք է հաստատվեն այն հիմնական սկզբունքի համաձայն, ըստ որի փոխադրման տարողությունը պետք է համապատասխանի.

ա/ մեկնման երկրի և ժամանման երկրների միջև փոխադրումների պահանջարկին,

բ/ փոխադրումների պահանջարկին այն տարածքում, որը հատում է /հատում են/ ավիաընկերությունը /ավիաընկերությունները/ հաշվի առնելով տեղական և տարածաշրջանային հաղորդակցությունները, որոնք սահմանված են այդ տարածքը կազմող պետությունների ավիաընկերությունների կողմից, և

գ/ ավիաընկերությունների միջոցով իրականացվող տարանցիկ քոփքների պահանջարկին,

5/ համաձայնեցված հաղորդակցությունների չվացուցակները ծանուցումը ստանալուց առնվազն երեսուն /30/ օր առաջ կներկայացվեն երկու Պայմանավորվող կողմերի ավիացիոն իշխանությունների հաստատմանը: Հատուկ դեպքերում ժամանակի այս սահմանափակումը կարող է կրճատվել վերոհիշյալ իշխանությունների համաձայնությամբ,

6/ մի ժամանակահատվածի համար սույն հոդվածի դրույթների համաձայն հաստատված չվացուցակները ուժի մեջ կմնան համապատասխան ժամանակահատվածների համար մինչև սույն հոդվածի դրույթների համաձայն նոր չվացուցակների հաստատումը:

ՀՈԴՎԱԾ 6

ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՃԱՆԱՉՈՒՄ

1. Համաձայնեցված հաղորդակցություններ կատարելու նպատակով մի Պայմանավորվող կողմի կողմից տրված կամ վավերական ճանաչված և դեռևս ուժի մեջ գտնվող թռիչքների՝ պիտանության, թռիչքներ կատարելու համար որակավորման վկայականները և լիցենզիաները պետք է վավերական ճանաչվեն մյուս Պայմանավորվող կողմի կողմից:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, այնուամենայնիվ, իրեն իրավունք է վերապահում մերժելու իր տարածքով թռիչքների համար այլ պետության կողմից իր քաղաքացիներին տրված կամ վավերական ճանաչված որակավորման վերաբերյալ վկայականների և լիցենզիաների ճանաչումը:

ՀՈԴՎԱԾ 7

ՍԱՔՍԱՏՈՒՐԵՐԻՑ ԵՎ ԱՅԼ ՀԱՐԿԵՐԻՑ ԱԶԱՏՈՒՄԸ

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի նշանակած ավիաընկերության /ավիաընկերությունների/ կողմից միջազգային հաղորդակցություններում շահագործվող օդանավը, ինչպես նաև մշտական օգտագործման սարքավորումները, մատակարարվող վառելիքը, քայուղերը և այդ օդանավում գտնվող պաշարները /ներառյալ սննդամթերքը, խմիչքները և ծխախոտը/ մյուս Պայմանավորվող կողմի տարածք մտնելիս պետք է ազատվեն բոլոր մաքսատուրքերից, ստուգման վճարներից և այլ տուրքերից կամ հարկերից՝ պայմանով, որ այդ սարքավորումները և պաշարները մնան օդանավի մեջ այնքան ժամանակ, մինչև որ վերաարտահանվեն:

2. Նույն տուրքերից և հարկերից, բացառությամբ մատուցվող ծառայությունների դիմաց կատարվող գանձումներից, պետք է ազատվեն նաև.

ա/ օդանավում գտնվող պաշարները, որոնք օդանավ են վերցվել որևէ Պայմանավորվող կողմի տարածքում այդ Պայմանավորվող կողմի իշխանությունների կողմից սահմանված սահմանափակումներով, և որոնք նախատեսված են մյուս Պայմանավորվող կողմի՝ սահմանված երթուղումներգրավված օդանավում օգտագործման համար,

բ/ այն պահեստամասերը, որոնք բերվել են որևէ Պայմանավորվող կողմի տարածք այն օդանավի տեխնիկական սպասարկման կամ վերանորոգման համար, որը օգտագործվում է մյուս Պայմանավորվող կողմի նշանակած ավիաընկերության /ավիաընկերությունների/ կողմից սահմանված երթուղում,

գ/ մյուս Պայմանավորվող կողմի նշանակած ավիաընկերության /ավիաընկերությունների/ կողմից սահմանված երթուղով շահագործվող օդանավի լիցքավորման համար նախատեսված վառելիքը և քայուղերը, եթե

անգամ այդ պաշարները օգտագործվելու են այն Պայմանավորվող կողմի տարածքով անցնող ճանապարհի որևէ հատվածում, որտեղ դրանք օդանավ են վերցվել:

Վերոհիշյալ «ա», «բ» և «գ» ենթակետերում նշված նյութերը կարող են գտնվել մաքսային վերահսկողության կամ հսկողության ներքո:

3. Որևէ Պայմանավորվող կողմի օդանավում գտնվող մշտական ավիացիոն սարքավորումների, ինչպես նաև նյութերի և պաշարների բեռնաթափումը մյուս Պայմանավորվող կողմի տարածքում կարող է իրականացվել միայն այդ Պայմանավորվող կողմի մաքսային իշխանությունների քույլտվությամբ: Այս դեպքում դրանք կարող են գտնվել վերը նշված իշխանությունների վերահսկողության ներքո այնքան ժամանակ, մինչև, մաքսային կանոնների համաձայն, վերաարտահանվեն կամ տնօրինվեն որևէ այլ կերպ:

ՀՈՂՎԱԾ 8

ՀԱՐԿՈՒՄ

1. Միջազգային երթևեկության մեջ ներգրավված օդանավի շահագործումից ստացվող շահույթները ենթակա են հարկման միայն այն Պայմանավորվող կողմի տարածքում, որտեղ գտնվում է ձեռնարկության որոշումներ կայացնելու լիազորությամբ օժտված ղեկավարությունը:

2. Միջազգային երթևեկության մեջ շահագործվող օդանավով և այդ օդանավի շահագործման հետ կապված շարժական գույքով ներկայացվող կապիտալը ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող կողմի տարածքում, որտեղ գտնվում է ձեռնարկության որոշումներ կայացնելու լիազորությամբ օժտված ղեկավարությունը:

3. Եթե Պայմանավորվող կողմերի միջև ստորագրված է առանձին համաձայնագիր եկամուտների և գույքի հարկերի առնչությամբ կրկնակի հարկումից խուսափելու վերաբերյալ, ապա կգերակայեն այդ համաձայնագրի դրույթները:

ՀՈՂՎԱԾ 9

ՈՒՂԻՂ ՏԱՐԱՆՑԱՄԲ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆ

1. Ուղևորները, ուղեբեռը, բեռը և փոստը յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի տարածքով ուղիղ տարանցման և այդ նպատակով նախատեսված օդանավակայանի տարածքը չլքելու դեպքում պետք է ենթարկվեն ոչ ավելի, քան պարզեցված ստուգման, բացառությամբ բռնության, օդահենության և թմրամիջոցների մաքսանենգության դեմ ուղղված անվտանգության միջոցներ ձեռնարկելու դեպքերի:

2. Ուղիղ տարանցմամբ փոխադրման դեպքում ուղեբեռը, բեռը և փոստը պետք է ազատվեն մաքսատուրքերից և այլ նմանատիպ հարկերից:

ՀՈԴՎԱԾ 10 ԱՎԻԱՑԻՈՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

1. Միջազգային իրավունքով նախատեսված իրենց իրավունքների և պարտավորությունների համաձայն՝ Պայմանավորվող կողմերը վերահաստատում են անօրինական գործողությունների դեմ քաղաքացիական ավիացիայի անվտանգությունն ապահովելու իրենց փոխադարձ պարտավորությունը: Առանց սահմանափակելու միջազգային իրավունքով նախատեսված իրենց իրավունքների և պարտավորությունների ընդհանրությունը, Պայմանավորվող կողմերը, մասնավորապես, պետք է գործեն համաձայն այն դրույթների, որոնք հաստատվել են 1963թ. սեպտեմբերի 14-ին Տոկիոյում ստորագրված «Օդանավում կատարվող հանցագործությունների և այլ գործողությունների մասին» կոնվենցիայով, 1970թ. դեկտեմբերի 16-ին Հաագայում ստորագրված «Օդանավի անօրինական գրավումը կանխելու մասին» կոնվենցիայով, 1971թ. սեպտեմբերի 23-ին Մոնրեալում ստորագրված «Քաղաքացիական ավիացիայի անվտանգության դեմ ուղղված անօրինական գործողությունների կանխարգելման մասին» կոնվենցիայով կամ համաձայն ավիացիոն անվտանգությանը վերաբերող այլ կոնվենցիաների դրույթների, որոնց կողմերը կարող են միանալ:

2. Պայմանավորվող կողմերը խնդրանքի դեպքում պետք է միմյանց անհրաժեշտ աջակցություն ցուցաբերեն՝ քաղաքացիական օդանավի անօրինական գրավումը, այդ օդանավի, դրա ուղևորների և անձնակազմի, օդանավակայանների և օդանավագնացության սարքավորումների անվտանգության դեմ ուղղված այլ անօրինական գործողությունները, ինչպես նաև քաղաքացիական ավիացիայի անվտանգության դեմ ուղղված որևէ այլ սպառնալիք կանխելու նպատակով:

3. Պայմանավորվող կողմերը պետք է իրենց փոխհարաբերություններում գործեն Միջազգային քաղաքացիական ավիացիայի կազմակերպության կողմից հաստատված՝ ավիացիայի անվտանգության և «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիայի հավելվածներ կազմող դրույթների համաձայն՝ այնքանով, որքանով այդ դրույթները կիրառելի են Պայմանավորվող կողմերի համար. նրանք պետք է պահանջեն, որ իրենց գրանցած օդանավը շահագործողները կամ այն օդանավ շահագործողները, որոնք իրենց տարածքում ունեն հիմնական աշխատանքի տեղ կամ մշտական բնակության վայր, ինչպես նաև իրենց տարածքում օդանավակայաններ շահագործողները գործեն այդ անվտանգության դրույթներին համապատասխան:

4. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ համաձայնում է, որ մյուս Պայմանավորվող կողմը կարող է օդանավերը շահագործողներից պահանջել, որ կիրառվեն սույն հոդվածի 3-րդ կետում նշված ավիացիոն անվտանգության դրույթները, որոնք այդ Պայմանավորվող կողմը նախատեսում է իր տարածք մուտք գործելու, այնտեղից մեկնելու և տարածքի սահմաններում գտնվելու ընթացքում: Յուրաքանչյուր Պայմա-

նավորվող կողմ պետք է երաշխավորի, որ իր տարածքում համապատասխան միջոցներ կձեռնարկվեն օդանավը պաշտպանելու և օդանավի բեռնման և ուղևորներին օդանավ վերցնելու ընթացքում ուղևորներին, անձնակազմին, փոխադրվող իրերը, ուղեբեռն ու բեռները, օդանավի պահեստամասերը ստուգելու համար: Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է մաս բարյացակամորեն քննության առնի մյուս Պայմանավորվող կողմի բոլոր այն խնդրանքները, որոնք վերաբերում են անվտանգության հատուկ միջոցների կիրառմանը որոշակի սպառնալիքի առաջացման դեպքում:

5. Բաղաքացիական օդանավը գրավելու դեպքում կամ այդ օդանավի, նրա ուղևորների և անձնակազմի, օդանավակայանների կամ օդանավագնացության սարքավորումների անվտանգության դեմ ուղղված այլ անօրինական գործողությունների կամ դրանց սպառնալիքի առկայության դեպքում Պայմանավորվող կողմերը պետք է հաղորդակցության հեշտացման և համապատասխան այլ միջոցներով օժանդակեն միմյանց նման միջադեպը կամ դրա սպառնալիքը արագ և անվտանգ վերացնելու համար:

6. Եթե Պայմանավորվող կողմերից մեկը չի հետևում սույն հոդվածի ավիացիոն անվտանգության դրույթներին, ապա մյուս Պայմանավորվող կողմի ավիացիոն իշխանությունները կարող են անհապաղ խորհրդակցություններ պահանջել այդ կողմի ավիացիոն իշխանությունների հետ:

ՀՈԴՎԱԾ 11

ՓՈԽԱԴՐՄԱՆ ՍԱԿԱԳՆԵՐ

1. Մի Պայմանավորվող կողմի ավիաընկերության /ավիաընկերությունների/ կողմից մյուս Պայմանավորվող կողմի տարածք կամ այնտեղից փոխադրման համար վճարման ենթակա սակագները պետք է հաստատվեն պատշաճ չափով՝ հաշվի առնելով բոլոր համապատասխան գործոնները, ներառյալ շահագործման արժեքը, չափավոր շահույթը և ծառայության բնութագիրը, ինչպես, օրինակ, արագությանը և հարմարություններին վերաբերող չափանիշները:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված սակագները պետք է համաձայնեցվեն Պայմանավորվող կողմերի նշանակած ավիաընկերությունների միջև:

3. Վերոհիշյալ 2-րդ կետում նշված համաձայնությունները, հնարավորության դեպքում, կարող են ձեռք բերվել Միջազգային օդային տրանսպորտի ասոցիացիայի՝ սակագները ամրագրող համակարգի միջոցով:

4. Այդ կարգով համաձայնեցված սակագները պետք է ներկայացվեն Պայմանավորվող կողմերի ավիացիոն իշխանությունների հաստատմանը ծանուցումը ստանալուց առնվազն երեսուն /30/ օր առաջ: Հատուկ դեպքերում ժամանակի այս սահմանափակումը կարող է կրճատվել՝ կախված վերոհիշյալ իշխանությունների համաձայնությունից:

5. Եթե նշանակված ավիաընկերությունները չեն կարող համաձայնության գալ որևէ սակագնի վերաբերյալ, կամ որևէ այլ պատճառով սակագինը չի կարող հաստատվել համաձայն սույն հոդվածի 2-րդ կետի, կամ եթե սույն հոդվածի 4-րդ կետում նշված երեսուն /30/ օրվանից առաջին տասնհինգ /15/ օրվա ընթացքում մի Պայմանավորվող կողմի ավիացիոն իշխանությունները ծանուցում են մյուս Պայմանավորվող կողմի ավիացիոն իշխանություններին սույն հոդվածի 2-րդ կետի դրույթների համաձայն հաստատված սակագնին վերաբերող իրենց անհամաձայնության մասին, Պայմանավորվող կողմերի ավիացիոն իշխանությունները կձգտեն համաձայնության գալ այդ սակագների վերաբերյալ:

6. Եթե ավիացիոն իշխանությունները չեն կարողանում համաձայնվել որևէ սակագնի վերաբերյալ, որը ներկայացված է նրանց սույն հոդվածի 4-րդ կետի համաձայն, կամ սույն հոդվածի 5-րդ կետում նշված որևէ սակագնի սահմանման հետ, ապա Պայմանավորվող կողմերը պետք է ձգտեն համաձայնության գալ սակագների վերաբերյալ:

7. Ոչ մի սակագին ուժի մեջ չի կարող մտնել, մինչև որ չհաստատվի յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի ավիացիոն իշխանությունների կողմից:

8. Սույն հոդվածի դրույթների համաձայն հաստատված սակագները պետք է ուժի մեջ մնան մինչև նոր սակագների հաստատվելը՝ սույն հոդվածի դրույթներին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 12

ԶՈՒՏ ԵԿԱՍՏՈՒՏՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ մյուս Պայմանավորվող կողմի նշանակած ավիաընկերությանը /ավիաընկերություններին/ տրամադրում է իր տարածքում ուղևորների, ուղեբեռի, փոստի և բեռի փոխադրման հետ կապված՝ այդ ավիաընկերության /ավիաընկերությունների/ վաստակած եկամուտների ավելցուկի ազատ փոխանցման իրավունք /ազատ փոխարկելի տարադրամով/ փոխանցման օրը գործող փոխանակման պաշտոնական ընթացագրին համապատասխան: Փոխանցումները պետք է կատարվեն անհապաղ՝ պահանջի ստացման օրվանից ամենաուշը վաթսուն /60/ օրվա ընթացքում:

2. Պայմանավորվող կողմերի միջև հատուկ վճարման համաձայնագրի առկայության դեպքում վճարումները պետք է կատարվեն այդ համաձայնագրի դրույթներին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 13

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԶՈՒԹՅՈՒՆ, ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԹՈՂԱՐԿՈՒՄ ԵՎ ՎԱՃԱՌՔԻ ԽՐԱԽՈՒՍՈՒՄ

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի նշանակած ավիաընկերություն /ավիաընկերություններ/ մյուս Պայմանավորվող կողմի տարածքում պետք է հավասար հնարավորություն ունենա /ունենան/, ենթարկվելով այդ մյուս Պայմանավորվող կողմի օրենսդրությանը, ծառայության վերցնելու տեխնիկական և առևտրային անձնակազմ՝ սահմանված երթուղիներով համաձայնեցված հաղորդակցություններ իրականացնելու և մյուս Պայմանավորվող կողմի տարածքում գրասենյակներ հիմնելու և դրանք աշխատեցնելու համար:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի նշանակած ավիաընկերություն /ավիաընկերություններ/ հետագայում պետք է հավասար հնարավորություն ունենա /ունենան/ իր /իրենց/ գրասենյակներում թողարկելու բոլոր տեսակի փոխադրման փաստաթղթեր, նշանակելու պատշաճ կերպով լիազորված գործակալներ, ինչպես նաև՝ մյուս Պայմանավորվող կողմի տարածքում գովազդելու և խրախուսելու վաճառքը:

ՀՈԴՎԱԾ 14

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

1. Մի Պայմանավորվող կողմի ավիացիոն իշխանությունները մյուս Պայմանավորվող կողմի ավիացիոն իշխանություններին վերջիններիս խնդրանքով պետք է տրամադրեն պարբերական կամ այլ պաշտոնական հաղորդագրություններ կամ վիճակագրական տվյալներ:

2. Վերոհիշյալ հաղորդագրությունները պետք է պարունակեն համաձայնեցված հաղորդակցություններում ավիաընկերության /ավիաընկերությունների/ կողմից իրականացվող փոխադրումների ծավալը որոշելու համար անհրաժեշտ բոլոր տեղեկությունները և, այդ փոխադրումների հետ կապված, մեկնման և ժամանման կետերը:

ՀՈԴՎԱԾ 15

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սերտ համագործակցության ոգով Պայմանավորվող կողմերի ավիացիոն իշխանությունները ժամանակ առ ժամանակ կխորհրդակցեն միմյանց հետ՝ սույն Համաձայնագրի և նրա Հավելվածի դրույթների կիրառումն ապահովելու և դրանց վերաբերյալ համաձայնություն ձեռք բերելու նպատակով:

2. Եթե Պայմանավորվող կողմերից որևէ մեկը գտնում է, որ պետք է փոփոխել սույն Համաձայնագրի որևէ դրույթ, ապա նա կարող է դիմել մյուս

Պայմանավորվող կողմին՝ խորհրդակցություններ անցկացնելու խնդրանքով: Այդ խորհրդակցությունները /որոնք կնախապատրաստվեն ավիացիոն իշխանությունների միջև քննարկումների միջոցով/ պետք է սկսվեն խնդրանքի ներկայացման օրվանից վաթսույն /60/ օրվա ընթացքում, եթե Պայմանավորվող կողմերը չեն համաձայնել այդ ժամանակահատվածի երկարաձգման մասին: Նման ձևով համաձայնեցված փոփոխությունները պետք է ընդունվեն յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի սահմանադրական ընթացակարգերին համապատասխան և ուժի մեջ մտնեն այդ փոփոխությունները ընդունելու մասին դիվանագիտական հայտագրերի փոխանակման օրվանից:

3. Հավելվածի փոփոխությունները պետք է համաձայնեցվեն Պայմանավորվող կողմերի համապատասխան իշխանությունների միջև:

ՀՈԴՎԱԾ 16

ՏԱՐԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

1. Եթե Պայմանավորվող կողմերի միջև որևէ տարաձայնություն է ծագում՝ կապված սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման հետ, ապա Պայմանավորվող կողմերը առաջին հերթին ձգտում են կարգավորել այն բանակցությունների միջոցով:

2. Եթե Պայմանավորվող կողմերը չեն հասնում տարաձայնության կարգավորմանը բանակցությունների միջոցով, նրանք կարող են համաձայնել, որ այդ տարաձայնության լուծումը հանձնեն որևէ անձի կամ մարմնի: Եթե նրանք դրան համաձայն չեն, ապա, Պայմանավորվող կողմերից որևէ մեկի խնդրանքով, այն պետք է ներկայացվի երեք միջնորդ դատավորներից բաղկացած դատարան. ընդ որում յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ նշանակում է մեկական միջնորդ դատավոր, իսկ երրորդ միջնորդ դատավորը նշանակվում է այս երկու միջնորդ դատավորների կողմից: Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է նշանակի իր միջնորդ դատավորին վաթսույն /60/ օրվա ընթացքում՝ հաշված այն օրվանից, երբ Պայմանավորվող կողմերից որևէ մեկը մյուսից դիվանագիտական ուղիներով ծանուցում է ստացել տարաձայնությունը միջնորդ դատարանում կարգավորելու խնդրանքով: Երրորդ միջնորդ դատավորը պետք է նշանակվի հետագա վաթսույն /60/ օրվա ընթացքում: Եթե Պայմանավորվող կողմերից ոչ մեկը չի նշանակում դատավոր վերը նշված ժամկետում, կամ եթե երրորդ միջնորդ դատավորը չի նշանակվում սահմանված ժամանակահատվածում, ապա Միջազգային քաղաքացիական ավիացիայի կազմակերպության խորհրդի նախագահը կարող է Պայմանավորվող կողմերից որևէ մեկի խնդրանքով, ըստ անհրաժեշտության, նշանակել միջնորդ դատավոր կամ դատավորներ: Բոլոր դեպքերում երրորդ միջնորդ դատավորը պետք է լինի երրորդ պետության քաղաքացի և գործի որպես դատարանի նախագահ:

3. Պայմանավորվող կողմերը պարտավոր են ենթարկվել սույն հոդվածի 2-րդ կետի համաձայն կայացված ցանկացած որոշման:

4. Եթե /և քանի դեռ/ Պայմանավորվող կողմերից մեկը չի ենթարկվում սույն հոդվածի 2-րդ կետի համաձայն կայացված որոշմանը, ապա մյուս Պայմանավորվող կողմը կարող է սահմանափակել, ժամանակավորապես դադարեցնել կամ չեղյալ համարել վերոհիշյալ որոշմանը չենթարկված Պայմանավորվող կողմին սույն Համաձայնագրի հիման վրա իր կողմից տրված որևէ իրավունք կամ արտոնություն:

5. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է վճարի իր կողմից նշանակված միջնորդ դատավորի անհրաժեշտ ծախսերը և վարձատրությունը: Երրորդ դատավորի անհրաժեշտ ծախսերը և վարձատրությունը, ինչպես նաև արբիտրաժային դատավարության հետ կապված ծախսերը պետք է հավասարապես բաշխվեն Պայմանավորվող կողմերի միջև:

ՀՈԴՎԱԾ 17 ԴԱԴԱՐԵՑՈՒՄ

1. Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը ցանկացած ժամանակ դիվանագիտական ուղիներով կարող է մյուս Պայմանավորվող կողմին գրավոր ծանուցել սույն Համաձայնագիրը դադարեցնելու իր որոշման մասին: Այդ ծանուցումը պետք է միաժամանակ հաղորդվի Միջազգային քաղաքացիական ավիացիայի կազմակերպության խորհրդին:

2. Այդ դեպքում Համաձայնագրի գործողությունը կդադարի մյուս Պայմանավորվող կողմից ծանուցման ստացման օրվանից տասներկու /12/ ամիս հետո, եթե մինչև այդ ժամկետի ավարտը փոխադարձ համաձայնությամբ դադարեցման մասին ծանուցումը հետ չվերցվի: Մյուս Պայմանավորվող կողմի կողմից նման ծանուցման ստացման մասին որևէ տեղեկության բացակայության դեպքում վերոհիշյալ ծանուցումը կհամարվի Միջազգային քաղաքացիական ավիացիայի կազմակերպության կողմից ստացված ծանուցումը ստանալուց տասնչորս /14/ օր հետո:

ՀՈԴՎԱԾ 18 ԳՐԱՆՑՈՒՄ

Սույն Համաձայնագիրը և նրա բոլոր փոփոխությունները պետք է գրանցվեն Միջազգային քաղաքացիական ավիացիայի կազմակերպության խորհրդում:

ՀՈԴՎԱԾ 19
ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ


Սույն Համաձայնագիրը ուժի մեջ կմտնի երկրորդ ամսվա առաջին օրը՝ հաշված այն օրվանից, երբ Պայմանավորվող կողմերը դիվանագիտական հայտագրերի փոխանակմամբ ծանուցում են միմյանց իրենց համապատասխան սահմանադրական ընթացակարգերով Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար նախատեսված պահանջները կատարելու մասին:

Ի վկայություն վերոշարադրյալի՝ ներքոստորագրյալ լիազոր ներկայացուցիչները, լինելով պատշաճ կերպով լիազորված իրենց կառավարությունների կողմից, ստորագրեցին սույն Համաձայնագիրը:


Կատարված է Վիեննա քաղաքում 2002 թ. փետրվարի 27-ին՝ երկու բնօրինակով, հայերեն, գերմաներեն և անգլերեն, որոնք հավասարազոր են:

Տարածայնության դեպքում նախապատվությունը կտրվի անգլերեն տեքստին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՏ՝



ԱՎԱՏՐԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՏ՝



ՀԱՎԵԼՎԱԾ

ա/ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից նշանակված ավիաընկերությունը /ավիաընկերությունները/ լիազորված է /լիազորված են/ իրականացնելու կանոնավոր օդային հաղորդակցություններ երկու ուղղություններով՝ ստորև սահմանված երթուղիներով.

Մեկնման վայրեր

Ժամանման վայրեր

Վայրեր Հայաստանում

Վայրեր Ավստրիայում

բ/ Ավստրիայի Դաշնային կառավարության կողմից նշանակված ավիաընկերությունը /ավիաընկերությունները/ լիազորված է /լիազորված են/ իրականացնելու կանոնավոր օդային հաղորդակցություններ երկու ուղղություններով՝ ստորև սահմանված երթուղիներով.

Մեկնման վայրեր

Ժամանման վայրեր

Վայրեր Ավստրիայում

Վայրեր Հայաստանում

գ/ Բոլոր միջանկյալ վայրերը և տարածքից դուրս վայրերը կարող են օգտագործվել յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերության /ավիաընկերությունների/ կողմից առանց երթևեկության հինգերորդ ազատության իրավունքների օգտագործման:

Երթևեկության հինգերորդ ազատության իրավունքի հնարավոր օգտագործումը կարող է համաձայնեցվել Պայմանավորվող կողմերի ավիացիոն իշխանությունների միջև: